Պարույր Սևակ

Անվերնագիր 5

Չոր մասրենու մի հին չափար,
Որ այգին է շրջապատում:
Չափարի տակ առյուծաբար
Մրափում է մեր չալ կատուն:
Չափարի տակ մի չար եղինջ
Շուլալվել է փշատենուն
Եվ մերթ ընդ մերթ դաղում է ինձ,
Երբ նրան եմ ես մոտենում:
Եղինջի մոտ՝ մի թո՛ւփ խոնարհ,
Թփի վրա՝ մի վառ զատի՛կ,
Թփերը՝ թա՛ց, կիսախոնա՛վ,
Շաղված շողով կաթիլ-կաթիլ:
...Թփի վրա մի վառ զատիկ՝
Մանկությունս է թռե՛լ, ցնդե՛լ,
Ինչպես ցողի մի ջինջ կաթիլ
Տարիների արևի դեմ:
Մանկությունս է թռե՛լ, ցնդե՛լ,
Բայց իմ սրտում մինչև հիմա
Մի մեղմ կսկիծ մնում է դեռ
Այն եղինջի խայթի նման...

21.V.1946թ.

Երևան